ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N ՄՊ/20-2019

„20„ 02 2019թ.

ք.Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ՎՏԱՆԳԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2019 թվականի գարնանային հեղեղումների, սելավների վտանգի նվազեցման և դրանց կանխարգելման միջոցառումների իրագործման նպատակով առաջարկել՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի սելավավտանգ գոտու համայնքների ղեկավարներին.

1) 2019 թվականի մարտի սկզբից իրականացնել հեղեղատարների վտանգավոր հատվածներում կանխարգելիչ միջոցառումներ, իսկ դրանց իրականացման անհնարինության դեպքում անմիջապես գրավոր ներկայացնել առաջարկություններ, հնարավոր վտանգների կանխարգելման և լուծման ուղիների վերաբերյալ:

2) Հեղեղումների սպառնալիքի դեպքում կազմակերպել համայնքների վտանգավոր տարածքներից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տեղափոխումը և պահպանումը:

3) Հանձնարարել Արարատի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությանը, հավաքագրել և վերլուծել ՀՀ պետական և

համայնքային բյուջեներով այս ուղղությամբ իրականացված աշխատանքների և միջոցառումների ընթացքը և ըստ անհրաժեշտության դրանց մասին տեղեկատվություն ներկայացնել Արարատի մարզային փրկարարական վարչությանը և համապատասխան կառույցներին:

2. Արարատի մարզային փրկարարական վարչության պետին՝ հսկողություն սահմանել մարզի համայնքներում հնարավոր սելավավտանգ գոտիներում առկա իրավիճակի նկատմամբ և դրա մասին պարբերաբար զեկուցել Արարատի մարզպետին՝ համապատասխան գերատեսչություններին տեղեկացնելու նպատակով:

3. Որոշումն իրազեկել ըստ առնչության:

20.02.2019

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN GARIK 2811870695 Գ. ՍԱՐԳՍՅԱՆ